


I



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՆՍՏԽԱԲ

ԷԴ. Թ Ո Փ Զ Յ Ա Ն

«ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՎԵՐԻ ԻԴԵԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Վերք Հայաստանի» վեպը նշանավորում է հայ գրականության զարգացման նոր դարաշրջանի սկիզբը, հայ հասարակական հարաբերությունների գեղարվեստական ճանաչման նոր որակը: Այս տեսակետից միանգամայն օրինաշափական էր նախառվետական ժամանակաշրջանում «Վերքի» վաթունամյակյանքին ուղեկցող պայքարը հայ շալգային երկու կուլտուրային տարրեր սերունդների միջև:

«Վերք Հայաստանին» տպագրվեց հեղինակի ողբերգական կորուստից միայն տաս տարի հետո, 1858 թվին: Այդ տարիների մամուկում արդեն որոշակիորեն դրսեւորվում էր պահպանողականների և ղեմոլիրատականների վերաբերմունքը Աբովյանի ժառանգության և ժամանակորապես նրա վեպի նկատմամբ: «Վերքի» առաջին գնահատողներից մեկը, «Կոռունկի» խմբադիր Մ. Աղարեկյանը, նշելով Աբովյանի և նարեկացու նմանությունը, գրում էր. «...Աբովյանը մարդկության և ազգության աիրու ճաշակից սիրութ վառած և միտքն արրած բանահյուտում և բանաճառում էր իր հայրենակցաց նահապետական կամ հովվական տնային և դաշտային կյանքը, մանրամասն նկատելով և նկարելով նրանց բարուց և վարուց այլևայլ հայկական հանգամանքները, նրանց հոգվու և սրտի կրոնական և բարոյական համոզմունքներն, զգացմունքները, նրանց սովորությանց, ավանդությանց և համոզմանց ազգի ազգի ձևերն ու կերպերը...»<sup>1</sup> Նույն հայացքն է արտահաջուկած «Սոս և Վարդիթերի», Նալբանդյանի գնահատությամբ, ձախողված առաջարանում: Պ. Պոռշյանն ասում է. «Մտածելով այս ամենը — բազմաշան ետակատուր Աբովյան ուսումնականը և զգալով անշուշտ ազգի ավանդություններն ու ծեսերը կենդանացնելու հարկն, դրեց յուր «Վերք Հայաստանի» արդյունավոր շարադրությունը...»:

<sup>1</sup> «Կոռունկ», 1860, էջ 878.

Աղարհեցինը, Պռոշյանը և Հետագայում Սպանգար Սպանդարյանը «Նոր Դարի» էջերում, ընդդում և առանձնացնում էին «Վերբի» այն հատվածները, որը արտահայտվում էր Արովյանի համակրանքը անհնարացած անցյալի և գյուղական նահապետական հարաբերությունների նկատմամբ:

Նացիոնալիստական պարտիաների ձևավորման և նրանց արկածախնդիր գործունեության հետագա ժամանակներում Արովյանի ժառանգությունը, մասնավորապես «Վերբի» գաղափարական բովանդակությունը, ննթարկվում է նորանոր խեղաթյուրունների: Ազգայնական բախտախնդիրները չանք չեն խնայել կապ ստեղծել իմենց քաղաքական ավանդուրիզմի և Արովյանի հայրենասիրական հոգորոնների միջև: Մեծ լուսավորիչ-գեմոկրատի հայացքներում արտահայտված ազգային բացառիկության և սնապարձության ոսոշ տարրեր նրանք աճեցնում էին անքնական շափերով՝ մինչև մարտնչող նացիոնալիզմի որակը:

Այսպիսով, տասնամյակներ շարունակ պահպանողական, լիբերալ և նացիոնալիստական տարրեր երանդի հոսանքները և պարտիաները խեղաթյուրում էին Արովյանի ստեղծագործության, հատկապես «Վերբի» խոր ժողովրդային բովանդակությունը, Արովյանի աշխարհայացքի թուզությունները և աահմանափակությունները խոտացնելով հորինում էին առատվածասերաբանատեղի, ազգային վշտի և տառապանքի ողբասացի ավանդական կերպարը:

Մեկնարաննելով Արովյանի վեպի ոեալիզմը և ժողովրդայնությունը, նալբանդյանը գրել է. «Ահա այդ աշխատության մեջ մարմին է առել ազգի հոգին, ազգի ներկա վիճակը, ազգի հասկացողությունը: Այստեղ, որպես մի կախարդական հայելու մեջ, ցույց է տալիս բանաստեղծը Հայոց Ազգի ընտանեկան կյանքի անշուր և անմիտիթար պատկերները: Այնոնց տեսնում ենք գուղերի տանուտյարքը, ծանոթանում ենք նոցա հասկացողության հետ: Բարեխիդան բանաստեղծը հանդիպեցնում է մեզ Հոգեոր մարդերի, խոսեցնում նոցա յուրյանց հասկացողության պես այս և այն բանի մասին, պատկերացնում է մեր առջև նոցա ունկնդիրների հասկացողության վիճակը, սահմանում է այն տիսուր հարաբերությունը, որ կար նոցա մեջ: Մենք տեսանում ենք այդ Ապոլոնյան հայելու մեջ հայկական կյանքի մեռած պատկերը, տեսնում ենք, թե, ինչպես այդ մեռելային դաշտի զանազան կետերում խլրտվում է առաքինությունը և հոգվական կամ նահապետական ժամանակիների հասկացողությամբ ընդգեմ է դիմվորվում այս կամ այն անիրա-

լության, թե ինչպես հալածվում է այս առաքինությունը և պատճառութեանը բյուր կաթիներով արտասովների<sup>1</sup>

Նալբանդյանը ոչ միայն ճշտորեն գնահատեց Արովյանի վեպի բովանդակությունը, այլև խորացնելով Արովյանի դեմոկրատիզմը, 60-ամյան թվականներին հանգավ ուսուցիչուն-դեմոկրատական եղբակացությունների:

Մարկար անցյալի կուտուրայի վարպետների ժառանգության իսկական բովանդակությունը հնարավոր իր ամբողջությամբ մնել-նարանել միայն մարքունինյան աշխարհայացքի դիրքերից: Ա-բովյանի ժառանգությունը իր իսկական հանաչումը դատավ միայն Սովետական իշխանության պայմաններում: Սովետահայ գրականագիտությունը զգալի աշխատանք է կատարել (թեև ոչ առանց թերությունների): Արովյանի ժառանգության քննադատական յուրացման համար Մարկար Արովյանի գիտավոր երկը՝ «Վերը Հայաստանին» գեռակա անհրաժեշտ ուշադրության մի արժանացել: Ավելին, մի քանի հետազոտողներ նույնիսկ կրկնել են բորժուական քունադատության տրաղիցին տեսակետները «Վերքի» մասին: Մեր նպատակը չէ այս հոգվածում հայ գրականության այդ նշանավոր երկի ամբողջական բնութագիրը տալ: Մենք ցանկանում ենք նշել միայն վեպի գաղափարական մի քանի առանձնահատկությունները, որոնք կարենու են Արովյանի աշխարհայացքը և «Վերքի» յուրաքանչյուրը ճիշշատ մնելու համար:

\* \*

«Վերը Հայաստանի» վեպի գաղափարական բովանդակության հիմքը ազգության պրոբլեմն է: Արովյանի վեպի մեջ գեղարվեստական արտասովոր ուժով դրակորվում է հայ ժողովրդի պատմության բահտորոշ շրջաններից մեկը՝ պարսկական բռնակալության վերջը և ոռուական տիրապետության սկիզբը: Տնտեսական, քաղաքական և հասարակական իրադարձություններով հարուստ այդ ժամանակաշրջանը հայերի ազգային ձևավորմանը նախորդող բարդ և հակասական մի ժամանակաշրջան էր, երբ ստեղծվում էին ազգային շարժման գաղափարական նախադրյալները:

Մեկնարանելով ազգությունների ձևավորման պրոցեսը, ընկեր Առաջինը գրել է: «Ֆեռոպակիզմի լիկվիդացման ու կապիտալիզմի գարգացման պրոցեսը միաժամանակ մարդկանց որպես ազգեր կազմավորվելու պրոցեսն է: Այսպիս է սեղի ունենում քանը, օրի-

<sup>1</sup> Թ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժղովածու, հ. 1, 1948, էջ 279.

Հակ, Արևմտյան Եվրոպայում»:<sup>1</sup> Ընկեր Ստալինը ցուց է տալիս, որ մի քիչ այլ կերպ է տեղի ունեցել ազգերի կազմավորման պրոցեսը Արևելյան Եվրոպայում: Այն ժամանակ, երբ արևմուտքում տանդսկեցին ազգային պետություններ, արևելքում կազմավորվեցին մի քանի ազգություններից բաղկացած պետություններ: «Մուսատանում ազգություններին միավորողի դերն ստանձնեցին վեհեկոռուսները, որոնց գլխավորում էր պատմականորեն կազմավորված Հզոր ու կազմակերպված ազնվական զինվորական բյուրոկրատիան:

Բանն արդպես է տեղի ունեցել Արևելքում:

Պետությունների գոյացման այդ յուրահատուկ եղանակը տեղի ունենալ կարող էր միայն դեռևս շիկվիդացված ֆեոդալիզմի պայմաններում, թույլ զարգացած կապիտալիզմի պայմաններում, երբ հետին պլանը մղված ազգությունները դեռ տնտեսապես չեին կարողացել կոնտակտացվել որպես ամբողջական ազգեր»:<sup>2</sup>

Այնուհետև ընկեր Ստալինը լուսաբանում է, որ ետ մղված ազգությունների (որոնց թվին պատկանում են նաև Հայերը) կյանքի մեջ ներխուժած կապիտալիզմը խռովահույզ է անում ազգություններին և շարժման մեջ է դնում նրանց: «Ծնունդ առած ինտելիգենցիան տոգորվում է ազգային գաղափարով և այդ իսկ տվյալությամբ էլ գործում է»:

Հայերի ազգային շարժման նախապատրաստման պրոցեսում ազգային գաղափարով տոգորվելու ամենացայտուն արտահայտությունը Արովյանի ատեղծագործությունն է, հատիկապես Շինուազի Հայաստանի վեճը:

Սակայն ո՞րն է ազգային շարժման բովանդակությունը:

Ընկեր Ստալինը մեկնաբանում է. «Ճնշված ազգի ամեն կողմից նեղված բուրժուազիան բնականաբար շարժվել է սկսում: Նա Հայրենի ներքնախավերին» է դիմում և ակսում է աղաղակել «Հայրենիքի» մասին, իր սեփական գործը հրամցնելով Համաժողովրդական գործի տեղ: Նա իր համար բանակ է հավաքագրում «Հայրենակեցներից» հանում... «Հայրենիքի» շահերի: Եվ «ներքնախավերը» միշտ չէ, որ անտարբեր են մնում դեպի կոչերը, հավաքվելով նրա դրոշի շուրջը. վերեկց եկող ունպրեսիաները նրանց էլ են դիմում, անբավականություն առաջ բերելով նրանց մեջ»:<sup>3</sup>

<sup>1</sup> Ի. Ստալին, Երկեր, հ. 2-րդ, էջ 354:

<sup>2</sup> Նույն տեղ, էջ 355:

<sup>3</sup> Նույն տեղ, էջ 357:

Ազգային շարժման նախապատրաստման ժամանակաշրջանը տարբեր երկրներում տևեցել է իր առանձնահատկությունները։ Հայ իրականության մեջ նույնպես, մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը, 30-40-ական թվականների սոցիալ-քաղաքական իրադարձությունները վճռական նշանակություն են տևեցել և իրենց կնիքն են դրել ազգի ձևավորման պրոցեսի վրա։

Դարեւ շարունակ թյուրքական, պարսկական այլևայլ բռնակալների լծի տակ կեղեքված և ճնշված հայ ժողովուրդը ցարական Ռուսաստանի էֆապանսիայի շնորհիվ ազատագրվում էր արևելյան բռնակալության շղթաներից և միավորվում էր Ռուսաստանին։

Ուշագած ազգության համար դա շարիքի փոքրագույնն էր, որը նախադրյաներ էր տեղծում հայերի ազգային ձևավորման, նրանց նյութական և հոգևոր գարգացման համար։

Աբովյանի վեպում արտահայտվել է պատմական այս ճշմարտացի հայացքը։

Ի տարբերություն բուրժուական պրակտիկայի անմիջական շատագովների, ազգության ձևավորման հարցին Աբովյանը մոտենում է լուսավորական դիրքերից և փայփայում բոլոր լուսավորիչներին հատուկ ընդհանուր շահի պատրանքը, միանգամայն անկեղծորեն հավատում ընդհանուր բարօրությանը։

Սահմանելով լուսավորական շարժման առանձնահատկությունները, կենինը գրում է. «Ինչպես և արևմտա-եվրոպական լուսավորիչները, ինչպես և 60-ական թվականների գրական ներկայացուցիչների մեծամասնությունը, Սկալդինը կրքոտ թշնամությամբ է համակված դեպի ճորտափիրական իրավունքը և նրա բոլոր արտահայտությունները, տնտեսական, սոցիալական և իրավական նախավավորում։ Այս «լուսավորիչն» առաջին բնորոշ գիծն է: Երկրորդ բնորոշ գիծը, որ ոռական բոլոր լուսավորիչների համար ընդհանուր է, — լուսավորության, ինքնավարության, ազատության, կյանքի և լիրոպական ձևերի և առհասարակ Ռուսաստանի քաղմականության եռանդագին պաշտպանությունն է: Վերջապես, «լուսավորիչն» երրորդ բնորոշ գիծը ժողովուրդական մասսաների, զյուավորապես գյուղացիների (որոնք դեռևս լիովին ազատագրված չեն կամ նոր միայն ազատագրվուած էին լուսավորիչների դարաշրջանում) շահերի պաշտպանությունն է, անկեղծ հավատը, թե ճորտափիրական իրավունքի և նրա մնացորդների

միացումն իր հետ ընդհանուր բարեկեցություն կրերի և զրան պահակելու անկեղծ ցանկությունը:<sup>1</sup>

Լուսավորական աշխարհայացքի հիմնական գծերը արտահարութել են նաև Արովյանի մատ, բեկվելով հայ իրականության պատմական կունկրետ պայմանների համապատասխան։ Արովյանի լուսավորական հայացքների բովանդակությունը պայմանավորված էր հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կացությամբ՝ 30—40-ական թվականներին։ Պարսկական բռնակալության տակ կեղեքվող և ֆիզիկական ոչնչացման դատապարտված ժողովրդի համար առաջնահերթ էր ոչ թե սոցիալական, այլ քաղաքական ազատության ինդիքտը։ Այս տեսակենտից պատահական չէ, որ Արովյանի առեղծագործության իդեալան հիմքը, համարյա բոլոր դեսպրեռում, ժողովրդի քաղաքական ինքնուրույնության հարցն է, մի գաղափար, որով տոգորված է Արովյանի լուսավորական գործունեությունը։ Արովյանը լուսավորիչ է ամենուրեք, մանկավարժական և հասարակական գործունեության մեջ, գեղարվեստական ստեղծագործություններում՝ վեպի, պատմվածքների, բանաստեղծությունների և նույնիսկ նամակների մեջ։ Լուսավորությունը Արովյանի կիրքն է, նրա տարերքը և խելական կոչումը։ Բայց 30—40-ական թվականներին հայ իրականության մեջ դեռևս թույլ էր դեմոկրատական աշխարհայացքի սոցիալ-քաղաքական հիմքը, այդ պատճառով ողբերգական բռնույթ էր կրում Արովյանի հերոսական մաքառումը ընդդեմ բռնակալության և միջնադարյան մտածողության թանձրացած խավարի։

Ասքարցյան աշխատանք կլինի Արովյանի գործունեության մեջ որոնել ոռմանտիկական անհատի տառապանքները, օժտել նրան կրոնա-միստիկական տրամադրությամբ, հայտարարել, թե ակարծի նա տառապում լիներ զգայուն խղճի, բորբոքում սրտի հիմանդրությունից» (Կ. Կուտիկյան), կամ իբր թե նա «գործել է Հոգեկան հավասարակշռությունը կորցրած» (Ե. Շահազդի), կամ վերջապես նրա հումանիստական գործունեության մեջ տեսնել հետին նապատակներ (Ալ. Երիցյան)։ Դժվար էր այլ բան սպասել լիբերալ կամ սրահանուղական ֆիլիստերներից։ Մեծ լուսավորչի կյանքը և գործունեությունը նրանց համար անըմբունելի առեղծված էր։ Բարձրուական մտքի ներքինիները Արովյանին ներկայացնում էին ձախողված մանկավարժի կամ կրոնական խենթացյալի կերպարանքով։ Դա լոկ հերյուրանը էր։

<sup>1</sup> Տ. Ի. Լենին. «Ո՞ր ժառանգությունից ենք հրաժարվում մենք», էջ 19.

Աբովյանի ողբերգությունը հասարակական խոր էիմքեր ուներ: Մեծ զեմոկրատը մարտնչում էր ուշացած ժողովրդի ազգային շարժման համար, ժողովուրդ, որն ապրել էր բռնակալության պայմաններում, ճնշվել փիզիկապես և հոգեպես, ոչ միայն օտար, այլև «ալյունի» բռնակալների կողմից: Միջնադարյան մտածողությունը, եկեղեցին և հոգեորականությունը կաշկանդել էին ժողովրդի միտքը, նրան դուրս մղել կուլտուրական զարգացման առաջընթացից: Պատմական այս իրադրությունն էր որոշում Աբովյանի ըուսավորական գործունեության հությունը, նրա ողբերգական բնույթը:

«Եկրի» առաջարանում, որը հայ լուսավորական շարժման կործունեության ծրագիրն է իդեական և էսթետիկական իմաստով: Աբովյանն արծարծում է նոր բովանդակությամբ և նոր ձևով զրականության ստեղծելու պրոբլեմը: Բայց դա ծանր ու զժվարին մի գործ էր, ներոսական մի հեղաշրջում զարերով սահմանված մտածողության նորմերի մեջ: Դժվարին մարտաման այդ հագիսին Աբովյանն արտահայտում է մի հոյսակապ համեմատությամբ: աշխարհակալ Կրեսոսին սպառնացող մահվան վտանգը քանդում է նրա համբ որդու լեզվի կապանքները: Համրության այդ տառապալից վիճակն է ապրում նաև հայ ժողովրդի երախտապարտ որդին: Ճ՛Ու քաններուն տարուց ավելի ա՛ իմ ազիգ հե՛ր, իմ սիրելի ազգ, որ սիրու կրակ ա ընկել, երգում, փոթոթվում ա, գիշեր, լերեկ լացն ու սուզը իմ աշքիցը, ա'խն ու ո'խը իմ բերնիցս շիպակում, ա՛ իմ արյունակից բարեկառմք, որ մեկ միտրս ու մուրագս ձեղ պատմեի ու հետո հողը մտնեիս:<sup>1</sup>

Մեծ զեմոկրատին մտաւոնչում է այն միտքը, որ նա գրաքար ստեղծագործություններով շի կարող օգնել ժողովրդին, իսկ նոր լեզուն դռնես անմշակ էր ու արհամարհված: «Սիրոս ուղում էր, պատոփ, որ էս երեխսեքանց ձեռքն էլ ինչ հայի զիրք տալիս էի, չիմ հասկանում: Ռուսի, նեմեցի, քրանցուղի լեզվումը ինչ քան որ կարում էին, նրանց անմեղ հոգուն էլ էին՝ էղպես բաները դիր գալիս: Ուզում էի շատ անգամ մազերս պոլիմ որ էս օտար լեզուքը ավելի էին սիրում, քանց մերը: Բայց պատճառը շատ քնական էր, էն լեզվներումը նրանք կարում էին երեւի մարդկանց գործքերը, նրանց արածներն ու աւածները, նրանք կարում էին է՛ն բաները՝ որ մարդի սիրու կարող է զրավել, չունի սրտի բաներ

<sup>1</sup> Խ. Աբովյան, «Եկրի» Հայաստանից, Գետհրատ, 1939, Էջ 6: Հետոց բոլոր մեջը բռնկությունը կատարված են այդ հրատարակությունից:

Հին՝ ո՞ւ գեղեցիկ սիրիւ: Ով չի ուզիւ լսիւ՝ թե սերը, բարեկամությունը,  
Հայրենասիրությունը, ծնողը, զավակը, մահը, կոփէս ի՞նչ զատ  
են, բայց մեր լեզվումը՝ թե էսպես բաներ ըլին, թո՞ղ՝ աշխ հանեն:  
Եւ ընչով երևսին քո լեզուն սիրել տաս» (էջ 7): Որքան մեզ Հայտ-  
նի է, Արովյանի այս և նման մտքերը մեծ մասամբ մեկնաբանվել  
են որպես ոդորում աշխարհաբար լեզվի ստեղծման համար: Իմ  
կարծիքով մեջքերած ստղերում Արովյանն առաջին հերթին ընդ-  
գծում է նոր աշխարհիկ բովանդակության անհրաժեշտույթունը,  
որովհետև հայ հին գրականության մեջ՝ «ինչ կա եկեղեցու վրա յա,  
աստծու ու սրբերի»: Արովյանի այս արտաճայտությունը անշուշտ  
պայմանիկան ընույթ ունի: Նրան բաց հայտնի էր, որ հին գրակա-  
նության մեջ սակավ չեն աշխարհիկ բովանդակությամբ ստեղծա-  
գործությունները, բայց հասկանալի է, որ այդ գործերը չեն կարող  
բավարարել ազգային շարժման նախապատրաստման գաղափարա-  
կան պահանջներին: Արովյանն առաջարկում էր ոչ միայն նոր բո-  
վանդակություն և նոր թեմատիկա, այլև նոր մեկնաբանություն:

Սերը, բարեկամությունը, Հայրենասիրությունը, «երեկոի  
մարդկանց գործքերը» և այլ թեմաներ արդեն նվաճված բնադրավառ  
էին կամ գեղարվեստորեն նվաճվում էին ուսև և ելորդական ա-  
ռաջավոր գրականության մեջ: Արովյանը խորապես գիտակցում էր,  
որ այդ գաղափարները կրարձրացնեն ժողովրդի ազգային ինքնա-  
գիտակցությունը, բայց այդ նոր բովանդակությունը չէր կարելի  
արտահաջտել գրաբարի միջոցով: Գրաբարը և՛ որպես լեզու և՛  
որպես մտածողություն արդեն հնացել էր. նա մատչելի էր տաս-  
նյակներին, իսկ ազգային շարժման կենսական շահերը պահան-  
ջում էին նոր գաղափարները շարադրել հարյուր հազարներին  
մատչելի լեզվով:

Աշխարհաբար գրել են նաև Արովյանից առաջ, երեմն նույնիսկ  
արևիլի մարուր, բայց այդ աշխարհաբարը չի գարձել գրականության  
լեզու, որովհետև համարյա թե չի դրսնորել նոր բովանդակություն: Արովյանի մեծ արժանիքը այն է, որ նա բանդեց հայ գրականու-  
թյան մեջ տիրապետող «միջնադարյան պարտադիր մտածողու-  
թյան շրջանակները» (Էնգելս), հայտնագործեց գեղարվեստական  
մտածողության նոր գարաշրջան, նոր բովանդակություն և նոր  
ձև:

Ո՞րն է այդ նոր բովանդակությունը: Ենելով ժողովրդական-  
դեմոկրատական մտածողության ակունքից, Արովյանը արտասովոր  
ուժով ընդարձակեց գրականության ընդգրկման սահմանները. նա

Հայտաբերեց Հասարակության, պետության, ազգային ազատադրական շարժման իդեաները և գեղարվեստական դրականության հերոսի բնավորության ազգային առանձնահատկությունները, պրոբլեմներ, որոնք մինչև այդ շնուրածված բնագավառ էին մեր դրականության համար:

*15934* անդամներից առաջարանում հեղինակը գրում է. «ՄԵԿ քարիկանդանի աշակերտաներս՝ որ բաց թողի, սկսեցի՝ ինչ որ երեխությունից լուծ, կամ տեսած բան գիտեի, տակ ու գլուխ անիլ, վերը իմ շիզան Արասին միտս ընկավ, նրա հետ Հարիր բազ Հայի տղերը էլ իրանց գլուխը քարձրացրին ու ամենն էլ ուզում էին՝ որ իրանց ուղը գնամ: Մյուսները մեծ մեծ մարզիկ էին, շատն էլ հաւատ սալամաթի փառք սրածո, Աղասին աղքատ ու միուած, նրա սուրբ գերեզմանին դուրբան: Ասեցի կեղծավորությունը շանեմ, նրան բնարեցի (էջ 9): Այս տողերի մեջ արտահայտվում է իդեալիան և սահմանական նոր գիրքավորում իրականության հանդիպ. գեղարվեստական ստեղծագործության առարկան ժողովուրդի է, ժողովրդի հերոսը: Իրականության այդ նոր ըմբռնումը հնարավորություն տվեց Արօվյանին դրսուրիլու ժողովրդի կյանքի ու պատմության հիմքում ընկած օրինարիչ բանաստեղծական սկիզբը, որ անհայտ էր Արովյանին նախորդող գրական սերնդի՝ Բագրատունու, Ալամդարյանի և Թաղթագլանի համար:

Արովյանի ստեղծագործության ելակետը իրականությունն է, նրան ողինչնում են մարդկային ուսուլ փոխհարաբերությունները՝ աճնող, տուն, երեխայություն, ասած ու լսած բաններ էնպես էին կինդանացել, որ էլ աշխարքը միտս լ՛որ գալիս: Ինչ խուզ, կորած, մոլորած մտքեր ունեի, բոլորը բացվել, եթ էին եկել: Նոր էի իմանում, որ գրաքառ և ուրիշ լեղվաներ մինչև էն սշաթը միտք փակել, բխովել էին (էջ 10):

Այսուհետև Արովյանը ամհանում է սաթետիկական երկրորդ կարևոր սկզբունքը. Հակառակ իրականությունից կտրված մտացածին կրոնական նյութերի, սրոնք գրաքար գրականության մենաշնորհն էին, հետամնաց տասնյակների հետաքրքրության առարկան, անհրաժեշտ է ժողովրդի կյանքը, ապրումները և մտքերը գեղարվեստորեն վերաբարդությունից գրականության համար. «Յող տրամադրանություն գիտեցողը իրան համբարի համար գրի, ևս, քո կորած, շվարած որդին՝ քեզ համար: Բայց ազգը, որին ձգտում էր պիտանի լինել, նրա կորած, շվարած որդին, հետամնաց էր, անզարդացում և նրա աղգային արժանապատվությունն արթնացնելու համար

Արովյանը դիմում է անցյալին, վկայակոչում «Հիանալի թագավորաց, իշխանաց գործքն ու կյանքը, մեր հայրենիքց, մեր սուրբ աշխարհի առաջվան սրանչելիքն ու հրաշքը, մեր ընտիր ազգի անընման ընությունը ու արած քաջությունները» Մասիս առաջին էր կանգնած միշտ, որ մատով ցույց էր տալիս՝ թե ի՞նչ աշխարհի ծնունդ եմ ես, դրախար մտքում էր կենդանի, որ ինձ երազում թե լուրջ՝ միշտ մեր երկրի անունն ու պատվականությունն՝ իմ առաջ էր բերում, Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսավորիչ՝ թևած տեղու էլ ինձ առում էին, որ ես իրանց որդին եմ. Եվրոպա թե Ասիա, ինձ անդադար ձեն էին տալիս, թե Հայկա զավակն եմ ես, նոյան թոռը, էջմիածնա որդին...» (էջ 6): Ազգային բացառիկության և սնապարծության աշխարհայացքի մեծարումը, անեկանիած Արովյանի աշխարհայացքի թուլություններից մեկն է: Պետք է նկատի ունենալ, որ ազգի «Ծպորության» և բացառիկության գովքը, ինչպես ցույց են տվել Մարքոս և Էնգելսը Գերմանիայի օրինակի վրա, արդյունք է միանդամայն Հայրառակ Երևութի, աղքի թուլության, նրա պատմական հետամուցության, տնտեսական և քաղաքական գարգացման ցածր աստիճանի, դասակարգային պայքարի թուլլ գարգացման: Չնայած Արովյանի խանդավառ հավաստումներին, այնուշանդեմ նա նույնպես գիտակցում է, որ ազգի մտավոր զարթոնքի համար զրախտի բնակիչ, նոյան թոռ և էջմիածնա զավակ լինելու փաստարկումը բավականաչափ թուլլ է և նա դիմում է նոր, ամենի ճիշտ պատճառաբանության՝ լուսավորության միջոցով յուրացնել առաջավոր ազգերի ստեղծած կուտայքան:

Հայ ունալիստական գրականության վաղ շրջանը սկսվում է «Վերը Հայաստանի» վեպով, ուր ունալիգմը ոռմանտիկայի յուրահատուկ երանդով ստեղծագործական մեթոդի է՝ մերածիլում: Մեծ գրողը ճշմարտացիորեն նկարագրում է պատմական իրականությունը, իր գարաշրջանի հասարակական կյանքի հակասությունները, մարդկանց ըմբռնումները, հոգեվիճակը, այնքան հարազատ պատմական իրողությունը, որ մինչև այժմ էլ Արովյանի փաստական տվյալները, չնայած որոշ անճշտությունների, հավաստի աղբյուր են 19-րդ դարի պատմության համար: Բայց «Վերըի» մեջ ոռմանտիկ բնույթին կրում իրերի, երևույթների, զգացմունքների և ապրումների վերաբարդությունը, հերոսների բնովագրերը ու բնության նկարագրություններ, որոնք չեն առանձնանում, այլ բխում են վեպի ունալիստական տարերքից: Արովյանի ոռմանտիկ

Նկարագրությունների մեջ կա իրականության հատիկը և ընդհակառակը իրականությունը նրա մոտ միշտ տողորված է ոռմանտիկայի շնչով:

Ոռմանտիկական տարրը Արովյանի Հայացքներում մոալլ իրականությունից խուսափելու հետևանք չեր, այլ իդեալի և իրականության բախման արգյունք: Մեծ լուսավորիչը հետամնաց իրականությունը ցանկանում էր Հայթահարել՝ կամուրջ անցկացնելով իրականության և իր ձգութանքի միջև: Հետևաբար ոռմանտիկ տարրը Արովյանի Համար պատրանքային ելք էր իր բռնակալության ճնշումից, իդեալական հիմք՝ մեծարելու իր հորինած քնավզորությունների Հերոսականությունը պատմականորեն ողբերգական հանգամանքներում:

Ինեպիդմի տարրեր մեր գրականության մեջ արտահայտվել են զենքներու ժամանակներից, ժողովրդական բանահյուսության, պատմագրության, միջնադարյան բանաստեղծության մեջ և Հատկապես «Ծամնա ծռեր» կառում: Արովյանի վեպում ու եղիշեմի տարրերը վերածվում են նոր որակի: Բայց Արովյանը չի սահմանափակվել միայն մեր կուգուգրայի տրաղիցիաներով, նա յուրացրել է անտիկ արթեատը, Արևմտյան եկրոպայի վերածության և լուսավորության դարաշրջանների, ինչպես և ուս մեծ դժականության բավարարույն տրաղիցիաները: Այդ է, որ ովերը Հայաստանին դարձնում է խոր ազգային, բայց հիմնականում ազգային սահմանափակվածությունից զերծ մի ստեղծագործություն:

«Վերը Հայաստանին» գեղարվեստական տարրեր տրաղիցիաների խաչաձևման արգասիք է, խիստ ինքնատիպ իր ձևով և բռվանդակությամբ, որ մտքի արտասառվոր ուժով ընդհանրացվել է Հայ ժողովրդի վեղարվեստական իմացության դարավոր զարգացումը, Հայ ազգության կազմավորման նախապատմությունը, ժողովրդի անցյալը, ներկան և ապագան մինչև ուղղուցիոն-դեմոկրատական դաշտավայրախոսության ձևավորումը: Արովյանի մտահրիդները ընդհատվում է այնտեղ, որ մոտավորապես երկու տառնամբակ համու բարձրանում է նալբանդյանի անզուգական կերպարանը:

«Վերը» նկարագրվում է պարսկական տիբապետության ժամանակաշրջանը, զանգվածային կոտորածների, կողոպուտի և օրստօրի ծավալվող վայրագրությունների մահաշունչ տարիները: Արևելյան բռնապետությունը Արովյանը կարծես սիմվոլացնում է

դաժան ձմռան էպիկական նկարագրությամբ, որով սկսվում է վեպը: «Բարիկենդան էր: Զին էկել՝ զիգվել, սար ու ծոր քանել էր: Պարզկա գիշերը է՞նակն էր գիտինը սաղցրել, որ ամեն մեկ տարը կոխինս, հազար տեղից տրաք տրաքում, ճռճում, ճրճում էր, ու մարդի չանց սրբացնում, ձեն տալիս: Ամեն մեկ ծառի ճղկներից, ամեն մեկ տան բաշից՝ հազար տեսակ սաղցի լուզա, հազար տեսակ ձնի քուզա՝ կախ էր էկել ու բիզ բիզ իրար վրա սառի: Հենց գիտես՝ սար ու ծոր կամ նո՞ր էր ծաղկի, կամ նոր ծերացել՝ մանվան գուռն ընկել: Չունչն էր մնացել, որ տա ու աշխարթիս բարով մնա ասիս: Բայց ձմռան ամայացնող շոմշը ամեն ինչ չի ոշընչացրել, սառուցի հաստ շերտի տակ տիտուր ու տրտում քըլում է շուրբ: Բոնության և կեղեքան կապանքների մեջ ապրում և տուլում է ժողովուրդը:

Բարիկենդանի ուրախությունը տոնական տրամադրությամբ է համարել Քանաքեն գյուղը: Արիտասարդները Աղասու զիսամփառությամբ ապրված են ջրիբով: Ուրախության մեջ են նաև քիգուղերը: Գրոտեսկային գծերով նկարագրված այդ մարդիկ, թեև ապրում են խավարի և հետամնացության մեջ, բայց գիլիսովիայուց են աշխարհի, կյանքի և լուսավորության անհրաժեշտության մասին, երազում են ոռւսաց թագավորի օգնությունը: Բայց հանկարծակի փոխվում է ամեն ինչ: Սարդարի ֆառաշները ցյուղ են խուժել գեղեցիկ թագունուն հարեմ տանելու համար: Գյուղը լցվել է առ ու սարսափով: Թագունին ուշամափվել է, իսկ ինեւակորույս մայրը անհծում է անդամ աստծուն: Աղասին, որ հեռվից տեսնում էր այդ ամենը, անսպասելիորեն հարձակվում է առևանգողների վրա, սպանում է մի քանի հոգու, իսկ մնացածներին փափուստի մատնում: Թագունին փրկված է, բայց Աղասու հերոսական տրարբեր չի արժանանում համագյուղացիների խրախուսաներին: Նրանք պատկերացնում են Աղասու արարթի սոսկալի հետևանքները և խորհուրդ են տալիս նրան փախչել, հեռանալ գյուղից:

Ուշակորույս հերոսին ընկերները փախցնում են Ապարանը Հայածված երիտասարդների հարազատներին սարդարը բանտարկում և տանջում է երեանի քերդում: Ռուսական բանակի հարձակման առիթով բռնակաները սկսում են կռուրել հայերին երեւանում, ելդարաբիլիայում և այլ վայրերում: Աղասու խումբը հաճախ օգնության է հանում հանկարծակի, ազատում գերված հայերին և կոտորածի մատնում պարսիկ շարդարներին: Երկանի

վրա հարծակվելու օրերին Աղասին միանում է ոռուական զորքին և առաջիններից մեկը մտնում երևանի բերդը բանտարկված հորը աղատելու համար։ Այն պահին, երբ Աղասին գրկում է ժերումի Հոռոր, բերդում թաքնված պարսիկները սպանում են նրան հոր գրկի մեջ վեպն աշխարտվում է Աղասու հանդիսավոր թաղման նկարագրությամբ։ Այս է վեպի այսուհետային դարձացման կմախիքը, որի վրա կառուցված է անօրինակ մի ստեղծագործություն, տոգորված շիկացած հույզով, անհում հայրենասիրությամբ և խոր մարդկայնությամբ։

\* \* \*

Ինչպես նշեցինք, «Վերը» արտացոլում է պարտկական բըռնակալության անկումը և ոռուական տիրապետության սկիզբը։ Պատմական արդ իրադրության մեջ Հայաստանը կանգնած էր երկրներանքի առջև «կամ կը անված լինել շահական Պարսկաստանի և սովորանական Թյուրքայի կողմից, կամ անցնել Ռուսաստանի հովանավորության տակ... երկրորդ հեռանկարը այնուամենայնիվ ժորրագույն չարիքն էր»։ Այսպիս է գնահատված Ռուսաստանի հովանավորության նշանակությունը ՍՍԻՄ Պատմության լավագույն դասագրքի առմիվ կառավարական հանձնաժողովի որաշման մեջ։

Պարսկական բանակալության շնչառեղծող պայմաններում հայ ժողովուրդը մեծ հավաստով և ակնկալություններով երազում էր Ռուսաստանի հովանավորությունը, այն համարելով ժողովրդի ֆիզիկական և հոգեոր փրկության միակ նախապայմանը։ Ռուսական բանակի հրամանատարությանն ուղղած համախոսականներից մեկում հայերը հավաստելով բանակին օգնելու իրենց պատրաստակամությունը, գրում են, որ եթե հարկ լինի թղթի վրա նկարագրել իրենց տառապանքները, «այն ժամանակ ոչ թուղթ և ոչ մեկան կրամականանաւ»<sup>1</sup>։ Աս պատկերավոր արտահայտությունը շեր, այլ դաժան իրականության պարզ արձանագրություն, մի իրականություն, որի մարդատյաց էությունը չգերազանցված գեղարվեստական ուժով դրսևորված է օվերբ Հայաստանին վեպում։

Իր հայրենի երկրում, հարազաւու հողի վրա ժողովուրդն ապշտում է ծնկաշոր, ղեղերում անի ու սարսափի մեջ։ Պարսիկ բըռնակալները ձեռք են մեկնում զյուղացու ոչ միայն արդար վաստանին, այլև ընտանիկան պատվին և չնշին անհնագության հա-

<sup>1</sup> «Փորձ», 1877—78, № 2.

մար բանտարկում և կախաղան են բարձրացնում, կամ վաճառում որպես սորուկներ: Սոսկալի դրության մեջ էր ժողովորդը: «Երեխա եմ եղել, որ ին տեղանց դուրս եմ էկել, — զրում է Արովյանը, — ամա էս օր էն, որ մտածում եմ թե Զանդի կամորքի վրովը, յա բազարի մեյզանովը անց կենալիս, ինչպես էր իմ լուսահոգի հերը ինձ ոտով, ձեռով անում, շունքի լեզվով խոսալն էլ ղազարի էր բերում, որ թեզ անց կենանք մեզ թուրք շտեմի, որ մտածում եմ թե քանի քանի անդամ հենց մեր այգումը յա մենք ենք դզլրաշ լարապու արել, յա նրանք մեզ, քանս վրես սոսում ա, միսս վեր թափիլում» (էջ 72): Բայց միայն մայրենի լեզվով խոսելը չէ, որ «ղազարի» է վերում. եթե շուկայում հայ զյուղացին պատահար կպչում էր պարախին ոչն տեղն էին քցում, էսքան էին սոխն զիսիսն վեր հատում, որ հացն էլ էր մոռանում, եկած ճամփեն էլ, իր օղլուշալն էլ... Աշխարքի զիսին հենց զիտես՝ կրակ պետք է վեր գար, էնպես էր ամեն մարդ սասանահարդում, սարսափում, որ իր զուկը պահի, բալի տակ շընկնիւ» (էջ 73):

Հայաստանը, Արովյանի արտօհայտությունը, հազար տարուց ի վեր դարձել էր գողի և ավազակի բնակարան: Միմյանց փոխարինող սարդարների կամ խաների «գործունեությունը» նշանավորվում էր նորանոր ոճրագործություններով, նրանց համար ոչո՞ւ մարդի, ոչ սոխի գլուխը, բոլորը մեկ էր» (էջ 71): Հայոթյունը թեև ապրում էր հարազատ հողի վրա, բայց «ոչ տունն էր իրանը, ոչ մալը, ոչ ապրանքը, ոչ ջանը, ոչ օղլուշալը»: Այդ պատճառով նույնիսկ հայրենի նողը նրանց համար օտարացել էր, դարձել ատելի: «Ղուշն իր բունը սիրում ա, ևս իմ նողը առում, փնտվում, շոնքի լսած ու տեսած քաներս կրակ են դառել սիրու էրում, փոթոթումա...» (69), «Փար շկա մեր երկրումը, բոլ չկա, որ հայի սրբնով ներկած շինիւ»: Բնական է, որ ժողովրդի սարվական վիճակը, թյուրք և պարախի բռնակալների ահազոր ոճրագործությունները կարող էին միայն բռնան զայրույթ և ատելություն ծնել: Դրա արտահայտությունն էր Աղասու պառթեղող խիզախությունը: Բարիկենդանի ուրախությունը վերածվում է սոսկալի մի ողբերդության: «Հանկարծ էս քեֆի միջումը՝ հենց բռնես՝ մեկ ամպ տրաքեց, երկիրը շարժվեց, յա թոփի թոփիսանի ձեն եկավ, յա երկինքը փուլ եկավ» (48): Սարդարի ֆառաշները եկել են շրնադ թագուհուն տանելու հարեմի համար, ո՞վ կհամարձակի դուրս գալ ֆառաշ-

ների դեմ, լավագույն դեպքում մարդիկ միայն լուս կարեցում են: «Գեղը հնաց բռնես բիրադի քանդվեցավ: Տղամարդկերանց որը որ վախւուկ էր, գլուխն առավ կորավ, որը որ մի քիչ պինդ սիրտ ուներ, զարգանդելով, դրդողալով մոտ Եկավ, չէ՞ թե օդնություն անի, չէ՞ այլ թե առենի, ինչպես մարդիկ են եկողները, ինչպես են տանուած խեղճ ջրատար աղջկանը» (Էջ 49):

Թյուրբական և պարսկական բանակալության հարյուրամյակ-ները խեղճել են ժողովորի մեջ մարդկացին բարձր հատկություն-ները, արժանապատվության և պատմի զգացումը, խիզախությունը, ազատության պաշտպանությունը, մարդիկ ապրում են միայն բռնական արգահատիկ կյանքով: Բայց զենուս ամեն ինչ չի մն-աել, զեռ կան խիզախ և անձնազո՞ւ մարդիկ ինչպես Աղասին, ո-րոնց մեջ պահպանվում են Հայ ժողովրդի լավագույն գծերը:

Աղասու մտավոր կերպարի և վարքագի հիմնական տարրերը, որպես խիզական ժողովրդական տարրեր, Արովյանը ցուցը է տա-իս նաև այլ էափողոների և պերսոնաժների մեջ:

Դատապարտելով եկեղեցական բարողների վիճակար աղջեցությունը, Արովյանը հիշատակում է, որ Էռովա, Ղարաբաղի, Մշու, Բայազետի հայերը մեծանալով ընության մեջ, տերտերի և եկեղեց-ու ձայն շահելով այլևս չեն վախենում ավետարանական բարողնե-րից և թշնամու հարձակումներին պատասխանում են խիզախ Հա-կահարվածով: Ալուսիսին է լուսեցի Հովակիմը. մի լեզենդար անձ-նավորություն, որի անունը Նույնիսիկ խուճապի է: մատնում ավա-զակներին: Հովակիմների այլ հերոսական ողին կովկել է սխոլաս-տիկական դատաժարակությունից Հեռու, Հայրենի ընության մեջ ևԱ՛խ, ի՞նչ տեղ են կենում՝ որ էսպիս շանեն, էս սիրտը շոմենան: Վարժատան շին՝ մեռած քառով, անհոգի շնչով, թուզ լեզվով լսել, թե Հայք էլ վաղ թագավորություն ունեին, որ կամ չհավատալին, կամ բուները վարպետի անսիրտ պատմության վրա տաներ: Ամեն քար նրանց Համար զիրք ա, ամեն ապառած նրանց Համար պատմու-թյուն, ամեն շին բերդ, քանդված մատուռ, կամ եկեղեցի, որ սար-ու ձոր զիրն են էստեղ, նրանց Համար կենդանի վարժապետ» (112):

Հայ ժողովրդի ազգատասիրական ոգին և Հայրենի Հողի պաշտ-պանության կորովը Արովյանը դրանորել է Խլզարաբիլիսայի Հերո-սական պաշտպանության, ինչպես և Աղասու խմբի Հերոսական սիրադորությունների նկարագրության մեջ:

Բնորոշ է այն հանգամանքը, որ Արովյանի պատկերացման

մեջ խիզախությունը և կրոնական մոլեռանդությունը անհարիր ե-  
րելով թիւնը էն: Ավելին, Աբովյանը ճշմարտացիորեն ցույց է տա-  
լիս, որ բուն ժողովրդական զանգվածները որքան հեռու են եղել  
կրոնից, այնքան ավելի էն սիրել իրենց հայրենիքը: «Զննեք ուշա-  
դիր և դուք կտեսնեք, որ դա իր բնույթով խոր աթեստական ժո-  
ղովուրդ է, նրան հատուկ չէ միստիկական խանդապություն, մտքի  
դրա համար նա ունի բավականին առողջ բանականություն, մտքի  
պարզություն և զնուականություն»:<sup>1</sup> Բելինսկու այս դիտողությունը  
ուսւ ժողովրդի մասին հիմնական գծերով վերաբերում է նաև հայ  
ժողովրդին:

Աբովյանը իրավացիորեն գտնում է, որ բոնակալությունից  
հետո ժողովրդի ատրվական կյանքի համար հանցավոր է նաև լու-  
սավորչական եկեղեցին: Բնորոշ է այն, որ Աղասու հերոսական ա-  
րարքը դատապարտում էն ոչ միայն բռնակալական ճնշումից և կրո-  
նական քարոզներից բթացած համագոյնացիները, այլև եպիսկո-  
պոսը: Պատասխանելով աղա Պետրոսի խոսքերին զենքով գործելու  
անհրաժեշտության մասին, եպիսկոպոսը քարոզում է հնագանդու-  
թյուն և համբերություն: «Քրիստոնեն սրով չի պետք է իր բանը  
յուլա տանի: Նրա թուրք իր համբերությունը ու հավատն ա...ա  
օթրիստոննեն թրի կոթն էլ ձեռ չի պետք է առնի, կարճ, որ քար էլ  
աղան վլխին»: Այս խոսքերի առթիվ, տողատակի ծանոթագրության  
մեջ Աբովյանն ասում է: «Ենոյ խոսակցությունն իմացողը կիմանա,  
թե ինչ էր մեր ինեղձության պատճառը»: Եվ կարծես ի հակադրու-  
թյուն համբերության քարոզի՝ Աբովյանը նկարագրում է պարսիկ-  
ների հարձակումը, հայերի կոտորածը և գաղթը:

Սակայն հայ եկեղեցու հանցանքը չի սպառվում քրիստոնեա-  
կան հնագանդության վնասակար քարոզով: Քննադատելով եկեղե-  
ցու և Հոգևորականների արատները, Աբովյանը շնասավ այն գա-  
ղափարին, որ կրոնը և լուսավորությունը անհարիր գաղափարներ  
են: Աբովյանը միամտորեն կարծում էր, որ եկեղեցին կարող է և  
պետք է դառնա լուսավորության օջախ: Այդ պատճառով չնայած  
նա ուարչնական ծաղրով մերկացնում է տերտերի տգիտությունը  
ժամասացության պահին, քայլ վեպի հետագա մասերում նորից  
անդրադանալով լուսավորության հարցին, կոկիծով զրում է: «Ա-  
մեն մեշտաի հայաթում գեղ տեղարենքն էլ՝ մեկ մեծ վարժատուն  
կա, ուր տեղ երկու, երեք լեզու են սովորում, մեր եկեղեցքանց հա-

<sup>1</sup> В. Г. Белинский, Избр. философские соч. т. I, стр. 470.

յաթներումը բագւագն էլ բուն չի դնիլ, բաս ի՞նչ կը սի՝ որ ազգի սիրտն էլ թիշ թիշ չովանալը (74):

Հայ ժողովրդին դարավոր թմրությունից դուրս քերելու և իսկական մարդկային կյանք ստեղծելու հիմնական նախապայմանն Արովյանը համարում էր լուսավորությունը: Առկայն լուսավորության կենսագործման համար նաև մի կողմից Հույսը դնում էր եկեղեցու, մյուս կողմից պատվավոր իշխանների՝ զավուների, խերիդինովների կամ թամամշտվերի վյա: Երկու դեպքում էր Արովյանը մոլորության մեջ էր: Ոչ հայ եկեղեցին և ոչ էլ պատվավոր իշխանները չեն կարող շահագրգումած լինել ժողովրդի լուսավորության գործով: Ավելին, Արովյանի լուսավորական ծրագիրը իր օրեկութիվ նշանակությամբ ուղղված էր տիրող դասակարգերի դեմ, և դա անիրագործելի մի ուսուպիս էր ցարիզմի տիրապետության պայմաններում:

\* \* \*

Հումանիզմի և մարդկայնության դիրքերից Արովյանը խստորեն բնագագատում է նոր բուրժուական հարաբերությունները: Բնորոշ է այն, որ Արովյանի սիրած հերոսները ոչ միայն զերծ են կրոնական մալությունից, այլև արհամարհանքով են վերաբերվում նոր ձևավորվող բուրժուական պրակտիկային, որը դաժանորեն խնդամթյուրում է մարդկային անհատի բարձր հատկությունները: Բառացիորեն մի քանի պարբերությունների մեջ Արովյանը վարագետորեն նկարագրում է կապիտալիստական հարաբերությունների այն նախնական շրջանը, երբ կապիտալը, Մարքսի արտահայտությամբ, «հանդիս է գալիս իր էլեմենտար ձևերով», որտես ապրանք կամ փող: «Թաղաքը որ մտնում եմ» հենց իմանաս թե աշխարքը սով ա ընկել. էլ ոչ խեր կա ոչ բարարյաթ: Հացն ու չուրն էլ որ փողով ըլին ծախում ու առնում, էլ ում դուռը զնաս, ո՞ւմ ձեռդ զեմ անես: Բազի վախտ էլ տեսել եմ՝ որ դուքաններումը կիտուկ կիտուկ մանեթները, ոտքին ածած՝ ամեն մեկ փող համարելիս էնպես զիտես՝ թե փողատիրոջ հոգին հնատն ա դուս գալիս, էնպես են սրբարթում իրանց խաղինի վրա: Հենց կիմանաս թե առաջներիցը թե կառնի կթովիլ (էջ 32): Արովյանը գեղարվեստորեն ցույց է տալիս, թե ինչպես ապրանքը և փողը նույնիսկ իրենց էլեմենտար ձևերում, արդեն խեղաթյուրում են մարդկային հարաբերությունները, հարազատներին դարձնում են օտարներ, նույնիսկ թշնամիներ:

«Հերք որդում չի ճանաշում, որտին հորը, ախալերն ախալորը, լավ առ քարը քարի վրա կանգնած մնում ա» (էջ 33):

Արովլանը մնեց խորաթափանցությունը ընդհանրացնում է. սփողի սիրեն ճանալողը ոչ հոգի ունի ոչ հավատ: Փող հող— մին առ Բացասելով բուրժուական պրակտիկան, Արովլանը չի կառում անցյալին: Նա օրոշում է հոգը և երազում լուսավորված ժողովուրդ և զարգացած երկրագործություն: Արովլանի մոտ, դեռևս սաղմնային վիճակում, աբուանալուին են այն գաղափարները, որ հետպայում շարադրեց Մ. Նալբանդյանը իր նշանավոր «Երկրագործությունը որպես ուզիղ ճանապարհ» աշխատության մեջ:

Նկարագրելով նոր զարգացած կապիտալիստական հարաբերությունների ոչ հերոսական բնույթը, հակառակ մասնիչության տարրը, նյութական ուժերի, իրենի, ապրանքների և դրամի տիրապետությունը մարդու վրա, Արովլանը միաժամանակ իր երազած հումանիստական անհատականության հոգենոր և ֆիզիկական ուժերի գերագույն խթալը գտնում է ժողովրդի մեջ: Դրա մարդունացումը դասնում է ժողովրդի աղքատ զավակ Աղասին, որովհետեւ աղքային պատաղբության համար, բռնակալության դեմ հետևողականորեն մարտնչում էր միայն ժողովրդը, որն ուներ իր ինքնուրույն պատմական դերը և հեռու էր կանգնած կապիտալիստական շահախնդիր հարաբերություններից:

Մեծ լուսավորիչը գտնում էր, որ բոլոր նրանք, ովքեր չեն ենթարկվել հնագաղության բրիստոններական քարոզին և բուրժուական հարաբերությունների խեղաթյուրմանը, պահպանել են մարդկայնության բարձր հմայքը: Արովլանը տեսնում էր, որ մարդկային տնհատը մանկական թօթովաներից մինչև կյանքի վերջին վայրկանը կրում է բռնակալության դառնությունները: Ժխտելով պարսկական բռնակալությունը, Արովլանը հանգում է այնպիսի եղբակացությունների, որոնք փաստորեն ուղղվում են նաև ցարական բռնակալության դեմ:

Խորապես ապրելով իր ժողովրդի գառն վիճակը, Արովլանը չէր հուսահատվում, նա չէր կորցնում հավասր ժողովրդի կարողությունների և նրա լավ ապագայի նկատմամբ: Արովլանը ժողովրդի մեջ առևնում էր մարդիկ, որոնք հակագրվում եին ճնշմանը և կեղեմանը, բռնակալական կյանքի անհեթություններին, մարդիկ, որոնք կրում էին լավը, գեղեցիկը և առաջավորը, այն, որ բովանդակում է ապագայի սաղմը: Անհրաժեշտ է ընդգծել, որ Արովլանի հումանիզմը կրելով պատմական սահմանափակության

կնիքը, Հիմնականում զերծ է աղքայնական սահմանափակությունից: Բարձր մարդկայնության հատկանիշները Արովյանը տեսնում է ամեն մի ժողովրդի լավագույն մարդկանց մեջ, հայերի հարևան ժողովուրդների և հատկապես սուս մեծ ժողովրդի մեջ: Դրա փայլուն ապացուցքը այն անհույս սերն է, որ Արովյանը տածում է դեպի աշխատավոր մարդը: Այդ սերը՝ բռնակալության նկատմամբ տածած Արովյանի ցասման հակագարձ արտահայտությունն էր և որպան մոլեգնում էր բռնակալությունը, այնքան ավելի խսրանում էր Արովյանի հումանիզմը:

Արովյանը հայ գրականության մեջ հայտնագործեց մարդկային անհատին իր հասարակական կապերով, ձգտումներով և հայցքներով: Մեր դրականության մեջ այդ առաջին հերոսը Ազասին էր, որ մարդմանվորում էր Արովյանի ողջ հիացմունքը մարդկային անհատի նկատմամբ և հայ ժողովրդի աղդային բնափորության լավագույն հատկությունները:

Ազասու բնութագիրը Արովյանը սկսում է եկեղեցու և բնության հակադրությամբ: Եկեղեցին արտահայտում է ոչ բանական, մարդու էությանը խորթ նախակիցքը, իսկ բնությունն ընկալվում է, որպես ուսուցիչ, որպես կյանքի և բարիքի աղբյուր: Ազասին ձանձրանում էր եկեղեցական երկար ու ծիգ արարողություններից ոչ միայն նրա համար, որ դա անհասկանալի էր, այլև այն պատճառով, որ դա համառում էր մարդու նորմալ բնությանը: Կրոնական ծիսակատարության այդ կարգը սահմանողը, Ազասու կարծիքով «Ծնորը հացի տեղ խոտ կրիի կռծած» (էջ 16): Խավարամիտ հոգևորականները, որոնք ի վիճակի շնորհացած են քացատրելու կրոնական ծիսակատարությունների իմաստը, ավելորդ և վնասակար միջնորդներ են մարդու և աստծու միջև: Ազասու կարծիքով՝ «Ճեկ երկու ծունք դիր, երեսիդ մեկ քանի խաչ հանիր, պրծանը գնաց, ժամի դուռը պաշ արա, էլ ետ արի քո բանը տեսա» (էջ 16): Ազասու այս խոսքերի մեջ արտահայտվում է արհամարհանք գեպի կրոնական ծիսատակարությունները և ձգտում վերացնելու եկեղեցու միջնորդությունը մարդու և աստծու միջև:

Եթե եկեղեցական ծիսակատարությունների ժամանակ թմրում է Ազասու միտքը, նա հոգնում և բնում է, առա դաշտում, բնության մեջ Ազասին ամբողջ էռթյամբ վերածնվում է: Նա ձգտում է թափանցել բնության ամեն մի երեույթի մեջ, բննել, հասկանալ նրա իմաստը: «Ա՞խ, ո՞վ ես դու, ո՞վ յարագանիդ դորբան՝ աստված, որ էսքան բարիք ես ստեղծել մեղ համար: Ա՞խ՝ ընչի՝

Հետո քո սուրբ երեսը մեկ օր մեղ ցույց տալիս, որ ոտներդ ընկանենք մեր սիրտը, մեր հոգին քեզ մատաղ տանք: Թե ասեմ երկրն ա մենակ գեղեցիկ, հազար ծաղիկներով, բուռով զարդարած, բայ երկինքը՝ ուր թողամ, որ ցերեկը ինձ լիս ա տալիս, հանդիս պատուղը հասցնում. գիշերը մութն իմ աշխիցս հեռացնում ու էնակս լադրի պես գլխիս վրա կանգնած՝ անձրև, արև տալիս, որ ես ապրեմ, որդիս պահպանեմ, աշխարքի պետքը զամ որ մեռնելիս էլ՝ գան՝ հողիս վրա, ինձ մեկ զարդակ ողորմի առենք (էջ 18): Արովյանի այս տողերի մեջ թեկ չեմ ժխտմամբ աստծու գոյությունը, բայց արտահայտվում է սկեպամիշտմի այն առողջ տարրը, որը կասկածանքի է հնմարկում և հանգապուլում էր միշնադրյան կրոնական աշխարհայացքի դոգմաներին:

Աղասին իրեն մենակ է զգում անսահման բնության մեջ, նա որոնում է մի էակ, որին կարող է բացել իր տառապած սիրտը: Այդ էակը, ինչպես որ պատկերացնում է Աղասին, քրիստոնեական աստվածը չե, դա բնության ոգին է նման մարդու, բայց և տարրեր նրանից: Աղասու նման հայացքը արդյունք էր ոչ թե կրոնական մոլեկունդության, այլ բնության հրաշալի երկույթների հանդեպ տաժած զարժանքի: «Աչքս մոլորգած էս թիկց էն թոսի, էս սարից էն սարն ա ընկնում՝ ծառի տակին ասես, սարի գլխին ասես՝ մտիկ անելով աշքս շաղվում չուր ա կտրում: Հենց գիտես, չեկ ձեն, մեկ թե, մեկ աներենովթ հոգի տերեմները խշայիս, դուշը թոշելիս, աղբյուրը քրքչալիս, բյուզբյուզ երգելիս, հովը փշելիս, շաղը երեսի թափելիս, ամպը դոռալիս, անձրեց գալիս՝ ինձ ձեն քիչ տալիս, ինձ ձեռով քիչ անում, ինձ վրա խնդում՝ թե վայելիր էստոն՝ հողածին մարդ, բարի կաց, բարություն արա...» (էջ 19): Աղասու պատկերացման մեջ բնությունը կենդանի, հարափոփոխ իրականություն է, ոչ միայն անձնավորված, այլ ոգեշնչված: Նա զրոյում է բնության հետ, բնության մայրենի լեզվով: Աղասու համար բնությունը սիմվոլ է, այն ամենի, ինչ եղել է և այն ամենի՝ ինչ լինելու է: Խսկ կա՝ արդյոք այդ ոգին բնության մեջ կամ բնությունից զուրս, Աղասին դժվարանում է պատասխանել, բայց կա՛ բազմերանգ ու անսահման բնությունը, բոլոր բարիքների աղբյուրը, մարդկային կյանքի և դոյտթյան հիմքը: Բնության և աստծո փոխհարաբերության աշխ քննադատական մտորումները բնորոշ էին գլուղացիական, դեմոկրատական մտածողության համար, և բովանդակում էին բնության առաջնության գաղափարի սաղմբը:

Աղասին ազնիվ և աշխատասեր մարդ է, նա դատապարտում

է, ուրիշի աշխատանքի արդյունքը յուրացնելը, ասելով. «Իս իմ կո-  
պիտ զլիսվը էնպիս եմ կարծում, նհամ տեղը գտած մալը ու-  
տելը և դատարկ բնելը հարամ աւ Մարդ պետք է ինքն էլ աշխա-  
տի, որ կերածը հալալ ըլիու Եվ իսկապես ոչ միայն իր աշխա-  
տանքն է կատարում Աղասին, այլև անձնուրաց կերպով օգնում է  
բոլոր նրանց, ովքեր կարիքի կամ փորձանքի մեջ են: Որքան նա  
հոգասար է դեպի աշխատավոր մարդը, նույնքան անողոք է թրշ-  
նամիների նկատմամբ: Աղասին արժանապատվության բարձր  
զիտակցությունը նա ելուամ է բռնակալների դեմ և պատմական ի-  
րաբերությունների հետագա զարգացման ընթացքում, ոյուղական  
առօրյայի սահմանափակությունից բարձրանում մինչև ժողովրդի  
քաղաքական բախտը վճռողի տատիճանը: Աղասու մեջ մարմնա-  
վորված են հայ ժողովրդի լավագույն զծերը, աշխատասիրություն,  
հումանիզմ, արդարամտություն, պարզ և խորաթափանց միտք:  
Աղասին հայ գրականության առաջին իսկական աղգային բնավո-  
րությունն է: Աղասին իդեալական հերոս է, բայց խորը ունիս-  
տական բովանդակությամբ: Իրականության մեջ թիւ էին Աղասի-  
ները, բայց նրանք ամբի ճիշտ և ամբողջական էին արտահայ-  
տում իրանքի ճշմարտությունը, հայ ժողովրդի հասարակական-  
քաղաքական ձգտումները՝ բուռն ատելություն և պայքար պարս-  
կական բռնակալության դեմ՝ հանուն հայ ժողովրդի աղատության:

\* \* \*

Աբովյանի վեպը ավարտվում է երեանի գրավման նկարա-  
գրությամբ, ուս ուսամիան օրինատացիայի և ուս պետականու-  
թյան մի խանդավառ շատապովություն է, որով սովորված է ոչ  
միայն «Վերը Հայաստանին», այլև մեծ լուսավորչի ողջ գործունե-  
ությունը: «Վերքը» որպես պատմական վեպ անկատեած արտացո-  
լում էր ժողովրդի նախապաշտումները և ակնկալությունները  
Թուաստանի հովանավորությունից: Բայց «Վերքի» հիմնական  
խնդիրը, աղգային շարժման զարգափարական նախապատրաստու-  
մը, արդեն ցարիզմի տիրապետության հետագա տարիների բուր-  
ժուաւ դեմոկրատական մտածողության արդասիք էր:

Աբովյանը ճշմարտացիորեն վերարտադրել է, որ պարսկա-  
կան սոսկալի վայրագությունները ապրած հայերը և հարեան ա-  
ղբարեշանցիները անսահման երախտագիտությամբ են. դիմավո-

յում ուստական գենքի հաղթանակը։ Ակսվոմ էր հայ ժաղովրդի կյանքի նոր ժամանակաշրջանը, ուստի մեծ ժողովրդի հետ բարեկամության ժամանակաշրջանը։ «Օրնովի էն մշաթը, որ Բախ օրնած ուր հայոց լիս աշխարհը մտավ ու զգեբաշի անիծած շունչը մեր երկրիցը հալածեց։ Քանի որ մեր բերնումը շունչ կա, պետք է զիշեր ցերեկ մեր բաշած օրերը ժառներս բերնու ու ոսի երեսը տեսնելիս երեսներիս խաչ հանենք, աստծուն փառք տանք, որ մեր աղոթքը լսեց, մեզ ուս թագավորի հղոր, աստվածաշնասատ ձևով տակը բերեց» (71):

Հայաստանի դրավման պատմական օրերին ժողովուրդը ցընծոթյամբ էր դիմավորում ուստական բանակի հաղթանական երթը։ Նա գեռևս չէր ապրենում հարամանատարական համազգեստով ցարական նվաճողին դիմուրի հագուստով ուս գյուղացոց։ Այդ տարբերությունը առաջին տարիներին չէր գիտակցում նաև Արումանքը, նա չէր հասկառում և չէր էլ կարող հասկանալ, որ ուստական ցարիդի նվաճողական բաղաբականությունը պայմանավորված էր Ռուսաստանի ուազմա-ֆեոդալական-առևտրական վերնախավի՝ ծովային ճանապարհներին, արտաքին առևտրի ընդարձակման և ստրատեգիական սուսնկությին տիրանալու պահճանչում։

Հայաստանի նվաճումից մի տասնամյակ հետո, ազգային շարժման զաղափարական նախապատրաստման ժամանակաշրջանում, գյուղացիության մեջ արդեն ձևավորվում էր դժուռությանը և բողոքները ընդդեմ ցարական բյուրոկրատական ուժիմի։ Բայց ինչպես որ ժողովրդական դժուռությունները և առանձին խռովությունները շինուածվեցին հետեւղական պատրարի ընդդեմ ցարիկմի սոցիալական և բաղաբական ճնշման, այսպես էլ Արովյանը տհմնելով շինուածիկների շահատակությունները, բնությունները, շահամավ և ի վիճակի չէր հասնելու ցարիդմի դառապարտման, սրբվհետի գեռևս թույլ էր Արովյանի սոցիալական հենարանը։

Սակայն պետք է նշել, որ «Վերքի» մեջ համարյա բոլոր դեպքերում ուստական ցարիզմի առջատագրական միսիան Արովյանը մեծարում է միայն սրաբակական բանակալության համեմատությամբ։ Եթե Հասան-իսանը կոտորածի և ոճիրի մարմնացումն էր, ապա նրա դեմ կովող Պատկերչը, որը այլ սրաբականերում նույնպես ժողովրդի դաշին էր, զարդարվում է առջատարարի լուսապատկով։ Եռյնիսկ ցարական դիներական մեջ Արովյանը տեսանում էր ազատաբար ուստահն և «Վերքի» մի շարք էջերում զուվեստով հիշատակվող աստվածաշնասատ» ցարը և նրա դիներական ոչ

թե Արովյանի ցարամոլության արդասիթ էր, այլ Ռուսաստանին և ոռու ժողովրդին ուղղված կրախտագիտության արտահայտություն:

Արովյանը անհոգ շերտությամբ փարեց ոռու մեծ ժողովրդին, նրա կուտուրային և «Ակերքի» օրդանական մասը կազմող «Զանդիի» մեջ ոռու և հայ ժողովուրդների բարեկամությունը արտահայտեց Վոլգայի ու Արաքսի սիմվոլիկ գրիփարանումուլ: Արովյանը խորապես գիտակցում էր, որ հայ ժողովրդի և նրա կուտուրայի հեռանկարը անխղելիորեն կապված է ոռու մեծ ժողովրդի հետ: Իսկ նրա պատմական միջադրույն ծառայությունն է: Արովյանը շնասարդ և չեր էլ կարող հասնել հասարակական կյանքի նկատմամբ Բելինսկու և Գերցենի եղբակացություններին. նա հեռու էր Բելինսկուց, բայց ոչ հակառակ գիրքում:

Ռուսական կուլտուրայի առաջավոր իդեաների յուրացումով Արովյանը թեև դանդաղ, բայց ինքնուրույն կերպով գնում էր այն ուղիղով, որը տանում էր դեպի Բելինսկին: 40-ական թվականներին ոռուսական առաջավոր միտրը հանձինս Բելինսկու և Գերցենի համեմ էր իսկական ստեղծագործական ինքնատիպության և ոգեշնչում էր ժողովրդի հզոր շարժումը գելի առաջ: Հակառակ ուղղուցին դեմոկրատների սլավյանոֆիլները ոռուսական կյանքում տեսնում էին ժիայն անշարժություն, հիտամբացություն, կրոնամոլություն և իդեալականացնում էին ժողովրդական կյանքի հենց այդ կողմերը: Խոմքակով քարոզում էր «Համաժողովրդական հնագանդություն», այդ համարելով ոռուսական ոգու ամենաարևորոշ գիծը: Բելինսկին բուռն զայրույթով դատապարտում էր նման մտայնությունը: «Գիտակցելով ազգային քարձր ակնքի անհրաժեշտությունը, — ասում է Բելինսկին, — և զգոնելով այն իրականության մեջ, մեղ հրամցնում են հնագանդությունը, որպես ոռու աղգության արտահայտություն»:

Արովյանը նույնպես բուռն էր պարուզ բողոքում էր հնագանդության դեմ, այդ համարելով հայ եկեղեցու ամենավիճակար քարոզներից մեկը:

Բելինսկին գրել է. «Մեր՝ ժամանակներում, օրավոր, ամիշի ու ափիլի գրւելութում են ժողովուրդների համակրանքը և սերը միմանց նկատմամբ: Այդ միսիթարական և մարդասիրական երեւույթը լուսավորության արգյունք է: Բայց դրանից երբեք չի հետևում, որ լուսավորությունը պետք է համահարթի ժողովուրդները և բոլորին դարձնի միակերպ, ինչպիս չըի երկու կաթիլը: Ընդհակա-

ուակը, մեր ժամանակը գերազանցապես ազգության ուժեղ դար-  
դացման ժամանակն է»:<sup>1</sup>

Հեռու լինելով անգույն կոսմոպոլիտիզմից ինչպես Բելինսկին, Արովյանը նույնպես լուսավորությունը համարում էր աղղային իսր-  
եաւրույնության և իրավաճակասարօւթյան կարևոր նախապայման: Արտահայտելով այս միտքը պատկերավոր կերպով, Արովյանն ա-  
սում է. «Եկանք բըրյուկի լեզուն քաղցր ա, վերու հավին (իսլա-  
բին), սիրամարգին աստված գեղեցիկ ձայն, սիրուն թեր ու բըմ-  
բուկ ա տվել: Ասենք վարդը շատ գովելի ա, քամ ընչե՞ չի մանու-  
շակը իր ուսնեղը իր հոտը նրան տալիս: Մի՞թե վարդին տեսնողը՝  
մանիշակին չի սիրիլ: Սարի անհոտ ծաղիկն էլ՝ իրան տեղը, իրան  
վառքը վարդի: Հետ չի փոխիլ: Միթե բըրյուկի լողը՝ կանորելիին  
էլ մի՞ պետք է պահի: Ամեն բան իր գինն ունի, շարարեղինը քաղ-  
ցըր ա, ամա հացի տեղը ե՞րբ կրոնի» (էջ 79): Այսպիս էր Արո-  
վյանի վերաբերմունքը տարրեր ժողովուրդների նկատմամբ: Հու-  
մանիզմը, հայրենասիրությունը, ժողովուրդների համերաշխության  
գաղափարները Արովյանի մոտ կրում էին պատմական ժամանա-  
կաշրջանի սահմանափակության կնիքը, սակայն հաճախ ելնելով  
ժողովրդական մտածողությունից՝ Արովյանը բուռն պաթոսով ժըխ-  
տում էր հինը և հետամնացը և հանգում առաջադիմական եղան-  
կացությունների, որը նրան դարձնում է մեր ժամանակաշրջանի  
արժանավոր նախորդը, անցյալի պրոցեսիվ-դեմոկրատական աշ-  
խարհայացը մեծագույն ներկայացուցիչը:

1948, հունիս

1 В. Г. Белинский, Избр. философские соч., т. I, стр. 357.